ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ

ՀՐԱՄԱՆ

25 մայիսի 2021 թվականի N 101 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 45-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության ղեկավարի 2019 թվականի ապրիլի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանող կանոնադրությունները հաստատելու մասին» N 45-Լ հրամանի 1-ին կետի 16-րդ ենթակետով հաստատված N 16 հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) 6-րդ կետի 4-րդ ենթակետում «ակտերի նախագծեր» բառերից հետո լրացնել «, այդ թվում՝ Ծառայության ղեկավարի և Ծառայության գլխավոր քարտուղարի՝ զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների գծով հրամանների նախագծեր, և դրանց ընդունման մասին տեղեկացնում համապատասխան աշխատողներին» բառերը.

2) 6-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) խաղաղ ժամանակ և Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման կամ դրա անմիջական վտանգի առկայության կամ ռազմական գործողությունների պայմաններում զորահավաքային գործառույթների շրջանակում իրականացնում է՝

ա. Ծառայության գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման, զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման աշխատանքների մեթոդական, տեղեկատվական և կազմակերպական աջակցությունը և մասնակցությունն այդ պլանների իրագործմանը,

բ. զորահավաքային նախապատրաստության շրջանակներում կազմակերպվող ուսումնավարժական հավաքներին և պարապմունքներին մասնակցության նախապատրաստության ապահովումը,

գ. Ծառայությունում աշխատող պահեստազորայինների ամրագրման աշխատանքների ապահովումը, նրանց զինվորական հաշվառման, պահեստազորային պատրաստության միջոցառումներին և զորահավաքային զորակոչին ներգրավման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքները զինվորական հաշվառում իրականացնող մարմինների հետ,

դ. «Պաշտպանության մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտերով Ծառայության համար սահմանված այլ միջոցառումների իրականացման ապահովումը,».

3) 6-րդ կետի 6-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

4) 11-րդ կետի 1-ին ենթակետում «ռեժիմն ապահովելու» բառերից հետո լրացնել «և զորահավաքային գործառույթներն իրականացնելու» բառերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ Տ. ՈՒԼԻԽԱՆՅԱՆ

25.05.2021

X

ՏԻԳՐԱՆ ՈՒԼԻԽԱՆՅԱՆ

Signed by: ULIKHANYAN TIGRAN 2812830492

Երևան